

ՄԷՋՄՈՒՄԻ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA - I - A HBAR
Grand'Rue de Pera, Tuxim 65

Համբարսա իրի սեկե եսեկի ՉԱՐՇԵՆՊԻՀ ՎԵ
ՃՈՒՄՆ. ԻՐԹԵՍԻ կիսկերի ձեշր օրումուր:

ՆԻՒՍԻԵՍԻ
30 ԲԱՐԱ

مجموعة اخبار
لكاوغلى تقسيم جادى نومبر 70

ԱՊՐԵԼԻ ՖԻՅԱԹԼԻՐԸ. — Իսթանբուլ իշին սենեկի 60 ղշ., — 6 ալըղը 35. — Թալրա իշին սենեկի 85 — 6 ալըղը 45 ղշ. տըր: — Մեմալիքի էնեպիլ իշին սենեկի 20 ֆր. տըր: — Բոսթա իւճրէթի պիզէ ալիտտըր: — 15 կիւնլիւք նիւսիսի 60 բարա տըր: — Իւկնաթ ՇԱՐԹԼԻՐԸ. — 1ինձի սահիֆէնին սըրասը 5, 2ինձի վէ 3ինձի սահիֆէնին սըրասը 3, վէ 4ինձի սահիֆէնին պէնէր սըրասը 1 ղշ. տըր: — 2օգ տէֆա տէրձ իտիւնէճէ իլանաթ իշին ալըրճա բազարըղ օրումուր:

Ղազէթայա միւթէալլիք խոսուսաթ իշին ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՂԱՅԵԱՆԱ միւրաճաթ օրումա: — Իտարէխանէ՛ Պէյօղլունտա ձառտէի քէպիրտէ Ն. 65:

ԱՆԱՐԱՏ ՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՆ

Ներկայ տարւոյս դեկտ. 8ը տիեզերա-
կան ուրախութեան օր մը պիտի ըլլայ
քրիստոնէայ աշխարհին համար: Ամէն կողմ
տեսնուած հազայ պատրաստութիւնները
երայիսի մ'են թէ արժանաւոր կերպով
պիտի տեսնուի փառաւոր յիսմամբ աշին
մեծ օրուման, ուր հոգեկոնեցաւ Ս. Կոյս
Մարիամին Անարատ Յղութիւնը: Քրիս-
տոնէութիւնը, այն ատեն, անհուն խան-
դաւառութեամբ որ զգուշացնէ սոյն հրատա-
րակութիւնը որ այնքան լաւ կը պատասխա-
նէր իր դարաւոր ըղձանքին: Փանի մը օր
վերջ կատարուելիք չքեղ հանդիսութիւն-
ները փայլուն ապացոյց մը պիտի տան թէ,
ներկայ սերունդը, բան մը չէ կորսնցու-
ցած Մարիամի նկատմամբ իր նախորդին
ջերմեանդութիւնէ: Եւ ինչո՞ւ այսպէս
չըլլայ, քանի որ Մարիամի արուած յար-
գանքն ու մեծարանքը միայն իրեն չեն
ուղղուիր, այլ և իր պաշտելի Որդւոյն:
Անարատ Յղութեան վարդապետութիւն-
ը կէս դար առաջ միայն հրատարակուե-
ցաւ, բայց անոր ճշմարտութիւնը այնքան
հին է որքան Եկեղեցին: Երբ Արիոս՝ Յի-
սուս Քրիստոսի աստուածութիւնն ուրա-
ցաւ, Եկեղեցին հանդիսաւոր կերպով հըռ-
չակեց Անոր աստուածութիւնը: Միթէ ան-
կէ առաջ չկար այդ ճշմարտութիւնը:
Թո՛ղ որ քրիստոնէութեան սկիզբէն մին.
չեւ հիւսիս զտնուած յիշատակարանները կը
հաւատան որ թէ Արեւելքի և թէ Արեւ-
մուտքի մէջ հաւատացած են Ս. Կոյսին Ա-
նարատ Յղութեան: Այդ յիշատակարան-
ներուն մէջ լայն բաժին ունին նաեւ Հայ.
Եկեղեցին. ահա քանի մը գեղեցիկ նմոշ-
ներ որոնք պատիւ կը բերեն մեր Սրբա-
ղան Գրականութեան. — «Որ ողորմեցար
ի մեզս ծնեալ մարդկան, Հայր Երկնաւոր,
ըստ մարդաբնէն, և ետուր բնութեանս
այսօր պարգեւ զԿոյսն Սուրբ, զծնող Որդ-
ւոյդ Միածնի, մաղթանօք սորա, Տէր,
մեզ ողորմեա»: (Կան. Երմի. Ս. Աս-
տուածածնին): — «Մառ կենաց անկեալ
յԱքին, Սուրբ Կոյս, որ զհայրածինն բըղ-
խեցեր զծաղիկ, և ետուր ի ժամու զՈր-
դին պատու մարդկան, զօրոյ զմարմինն
ճաշակեալ անուհացաբ յուսով. վասն որոյ
օրհնաբանեմք զՔիչ յաւուր քո ծննդեան»
(Նոյն): — «Բանաւոր երկիր Տիրուհի, և ան-
դաստան մաքուր ի փոք մեղաց. . . վասն
որոյ օրհնաբանեմք զՔիչ յաւուր քո ծննդ-
եան» (Նոյն): — «Նոր Սրովն ծնեալ ման-
կունք սուրբ աւազանան, շնորհադարձ-
եալք հոգւովն Աստուծոյ, օրհնեցէք զՀայրն
Երկնաւոր յաւուր ծննդեան Սրբուհոյ Կու-
սին, յոր օրհնեցայք յանձնեց նախնայն»
(Նոյն): — «Անսկիզբն Աստուած անճառելի,
անբաւ զօրութիւն, որ յիսկըմանց յաւի-
տենից խնամարկեցեր զօրդիւ Արեւմայ,
զերազոյն այսօր շնորհիւ փայլեալ ցուցեր
ծննդեամբ զՄայր Միածնիդ. քո՛ ընտրելոյ.
աղանձօք սոցա խնայեալ ի մեզ». (Կան.
Թովմ. և Աննայի): — «Որ յանէից բանիւ

զօրացուցեր զայնարան ամենայն, այսօր
մարդասիրեալ տնօրինաբար ի յանայն ար-
կեր հիմունս նորոյ աշխարհի. աղանձօք
սոցա խնայեալ ի մեզ» (Նոյն): — «Ի յամու
երկրէ այսօր բուսաւ մեզ բարեբեր բոյսն
բարի, շուշան հովտաց, ծաղիկն դաշտաց,
միամայրն Մարիամ արմատ տնկոյն անմա-
հոթեան. աղանձօք սոցա խնայեալ ի
մեզ»: (Նոյն): — «Անթառած ծաղիկ, ան-
դատապարտ չառաւիղ. . . Աստուածածին
և Կոյս զՔիչ մեծացուցանեմք»: (Կան.
Վերափոխման, Ա. օր): — «Ո՛վ գերա-
հաշ ծաղիկ բուրեալ յերմայ, հոս ան-
մահութեան ծննդոցս եւայի, յորմէ պիտե-
ցաւ մահ ընդ տիեզերս. օրհնութեամբ
զՔիչ մեծացուցանեմք»: (Մեծացուցէք):
Այս վկայութիւններէն միթէ այն կը
հետեւի թէ Ս. Կոյսը ներգործական մեղ-
քէ միայն ազատ մնաց. ինչ պիտի նշա-
նակէր ուրեմն անարատ անունը զոր մեր
շարականները յաճախ կուտան Մարիամի.
միթէ այդ անունը մարդեղութեան վերջ
միայն կը պատշաճի անոր, երբ Հոգին
Սուրբ իր հովանեաւ ծածկեց զանի:
Կընդունինք թէ վերեւ յիշուած խոս-
քերէն մեկ բանի՛ն ներգործական մեղքէ
ալ ազատ ըլլալ կը նշանակեն. բայց ինչ
իրաւունքով մեր մէջ բերած բալար վկա-
յութիւնները (դեռ չառ մը ուրիշներու
հետ զոր կրնայինք բերել), կ'ուզեն այդ
իմաստով մեկնել. ինչո՞ւ համար միայն
ներգործական մեղքին կը վերադրեն այն.
պիտի ընդհանուր խօսքեր որոնք հաւասա-
րապէս կրնան պատշաճել թէ սկզբնական
և թէ ուրիշ մեղքերու:
Մնաց որ, կարգ մը վկայութիւններ
ուրիշ կերպով չեն կրնար բացատրուիլ,
բայց եթէ այն իմաստով որ Ս. Կոյսը
սկզբնական մեղքէն կատարելապէս զերծ
մնացած է, իր ծնած օրէն է որ, «Կաւուր
քո ծննդեան» Մարիամ կը կոչուի «ան-
դաստան մաքուր ի փոք մեղաց». գոյու-
թեան այդ վայրկեանին՝ ներգործական
մեղքի վրայ չի կրնար ըլլալ խօսքը: Մա-
րիամի համար կ'ըսուի նաեւ «Մառ կենաց
անկեալ յԱքին», «Գերահաշ ծաղիկ բու-
րեալ յերմային, հոս անմահութեան ծննդոցս
եւայի». Կենաց ծածնէ ուրեմն, և ոչ
մահուան. սկզբնական մեղքը երբեք չէ
թուեալորած անոր արմատները, քանի որ
անիկա կը ծաւալէ անմահութեան բոյր մը
որ կեանք կը պարգեւէ եւայի խեղճ դա-
ւակներուն. անմահութեան այս բոյրը կը
ցուցնէ թէ Մարիամ եւայի միւս զաւակ-
ներուն ախոր բազմին չէ ենթարկուած:
Այս վկայութիւններէն յայտնապէս կը
տեսնուի թէ Ս. Կոյսն ազատ է սկզբնա-
կան մեղքէն: Կը մնայ ըսել թէ՛ երբ այս
շնորհքն ընդունած է:
Պէտք է դաւանինք թէ Ս. Կոյս Մա-
րիամ ինքն ալ փրկուած է. բայց Աղամի
միւս օրիւններէն, և նոյն իսկ Յովհաննէս
Մկրտչին ալ աւելի վաեմ կերպով փրկուած
է. վասն զի, Ս. Կոյսը իր գոյութեան ա-
ռաջին վայրկեանէն զերծ էր սկզբնական
մեղքէն. մինչդեռ Յովհաննէս Մկրտչի,
նոյն մեղքի լուծին տակ, քանի մը ամիս
մնալէ վերջ միայն սրբուեցաւ: Ս. Աս-

տուածածինը՝ դատաւարութիւն չի կրեց
երբեք, «անդատաւարտ» մնաց միշտ, և
ինչպէս կրնար «անդատաւարտ» ըսուիլ,
եթէ վայրկեան մ'իսկ ապրէր մեղաց իշ-
խանութեան տակ: Աւստի ուրիշ ապա-
ցոյց մըն ալ. «Ի յանայն արկեր հիմունս
նորոյ աշխարհի». եթէ Աստուած կուգայ
աշխարհը նորոգել, պէտք է որ իր ճշած
հիմքը՝ հին աշխարհի աւերածներուն հետ-
քը չի կրեն. այդ աւերածներու առաջինն
է սկզբնական մեղքը. և Աննայի Ս. Զա-
ւակն է «հիմունս նորոյ աշխարհի»: Տե-
սէ՛ք նոր Սիոնի վերածնած որդիները որ
խմբովն կուգան օրհնել այդ նոր աշխար-
հին Կոյս Թագուհին, Անարատը. և ինչ
բանի համար զինքն պիտի օրհնեն, եթէ
ոչ զիրենք մեր «նախնայն» անէծքներէն
ազատեալն համար. «Կաւուր ծննդեան
Սրբուհոյ Կուսին, յոր օրհնեցայք յանձնեց
նախնայն», ինչպէս պիտի կրնար զանոնք
ազատել, եթէ ինքն ալ սկզբնական մեղ-
քին լուծը կրէր: Անիկա միշտ օրհնեալ է
բոլոր կրիներուն մէջ:
Երկու խօսք ալ մեր շարականներուն
մէջ գտնուած սքանչելի տխրասերներուն
վրայ, ինչպէս՝ անարատ, Աստուածածին,
և նոյն Դիանէք թէ այս տխրասերներ Ս.
Կոյս Մարիամին կը արուին ոչ միայն հրե-
տակին այցելութեան վերջ, այլ և անկէ
չառ առաջ. չէ՛ որ Ս. Կոյսը ի յաւիտե-
նից ընտրուած է Աստուծոյ Մայրն ըլլալու
համար. եւ Բանն Աստուած՝ իրեն պարտք
սեպեց «մաքուր ի փոք մեղաց» և «անա-
րատ» Մայր մը ստեղծել իրեն:
Այս այսպէս ըլլալով, չենք հասկնար
թէ ինչպէս Ս. Մահակ քնն. Տէր-Սարգս-
եան, իր «Քննական Կրօնագիտութեան»
մէջ, յանդուգն յարձակումներ կ'ընէ Ա-
նարատ Կոյսին դէմ. թէ ինչպէս բարձր
անձնաւորութիւններ համարձակած են սոյն
զօրծը վաւերացնել ու յանձնարարել. և
որ աւելին է, Տէր-Սարգսեան՝ Յակոբ Ա. ի
նշանաւոր շարականին մէջ գտնել կը կար-
ծէ իր փաստերը, ու ճիշդ այդ շարակա-
նէն է որ մենք ալ կը քաղենք ինչ մեր
պայացոյցներուն մեծագոյն մասը: Քննենք
համառօտութեամբ Ս. Զեքերիոյ սա տողե-
րը. «Որ մաքրեցեր, Հոգիդ Սուրբ, զօրեւ
և զարգանդ Սօր քո փառեցիցին»: Կ'եղ-
րակացնէ թէ Մարիամ արատաւորուած
էր «մեղանշական կրեցերով» և «անկարգ
փափաքներով»: Եթէ այս խօսքերն անշատ
ըլլային ու հասարակ արարածներու վերա-
բերէին, այն ատեն բան մը կրնայինք ը-
սել. բայց Ամենասուրբ Կուսին վրայ է
խօսքը, և յարակից բոլոր տողերուն մէջ,
Յակոբ Ա. կը ջանայ հաստատել թէ անոր
վրայ չկայ ոեւ արատ: Տէր-Սարգսեան,
«որ մաքրեցեր» անոր զովին տալու էր,
արդարութիւնն այսպէս կը պահանջէ. այն
ատեն զայն չէր կրնար մեկնել ինչպէս կը
մեկնէ: Տրամաբանօրէն չենք կրնար ըն-
դունիլ որ Յակոբ Ա. ի պէս հեղինակ մը,
տող մը վեր հաստատածը՝ քանի մը տող
վարը հերքէ: Շարականները՝ Ս. Կոյսը մե-
ղի կը ներկայացնեն իբր «ժառ կենաց և
«անդատաւոր մաքուր ի փոք մեղաց»

և այս իր ծնած օրէն, այսինքն այն օրէն
ուր ներգործական մեղք չէր կրնար ունե-
նալ: Աստուած ողորմեցաւ «ի մեղս ծնեալ
մարդկան» (հետեւաբար՝ սկզբնական մեղ-
քի մէջ) և տուաւ «բնութեանս այսօր
պարգեւ զԿոյսն Սուրբ». ասիկա՛ յաւա-
կօրէն չի նշանակեր թէ, այդ Աստուա-
ծային պարգեւը մաքուր և անարատ էր
սկզբնական մեղքէն, թո՛ղ Տէր-Սարգսեան՝
իր մէջ բերած պարբերութիւնը ամբողջու-
վին կարգաւ, ու այն ատեն արարելու եղ-
րակացութեան պիտի յանգէր. «որ մաք-
րեցեր. . . այսօր ամուր ծնողաց նորին եւ
սուր զՄայր բանին, զօրհնին եւայի»: Ուրեմն
այդ Կոյսը որ կը ծնի կարող է
եւան օրհնել. ուստի անարատ է: Այդ
«մաքրեցեր» կը նշանակէ աւելի մեծ չը-
նոր մը որ կը բարդուի արդէն ընդունա-
ուածներուն վրայ, սա գոյութեան համե-
մատ թէ, «ով որ սուրբ է, թո՛ղ աւելի
սուրբ ըլլայ». մեղքէ ազատելու խնդիր
չկայ հոս, քանի որ հեղինակը քանի մը
անգամ կը պնդէ թէ, Ս. Կոյսն անկէ
զերծ է:
Մոլորութիւնը՝ մոլորութիւն կը ծնի.
և Տէր-Սարգսեան՝ իր պաշտպանած սկզբ-
բուններուն համար կ'ստիպուի ըսել թէ,
Տէրն մեր ինքն ալ մեր մեղանշական բնու-
թիւնն առաւ. թէ այդպէս չըլլար, ինչ
պիտի գամէր խաչին վրայ. ահա եղբա-
կացութիւն մը որ ամէն ուղղամիտ մար-
դու զայրոյթը կը գրգռէ: Կրեցական ըլ-
լալու կամ փրկուի կրնուի. հարկ չկայ՝ գիտ-
նալու համար թէ, Ս. Գրքի ոճով, Յի-
սուսի նկատմամբ զօրծուած «մեղք» բա-
ռը կը նշանակէ «մեղաց զոհ» և «անմեղ
զոհ», ինչպէս կը հաստատէ Պողոս Առաք-
եալ: — Կ'ուզէինք ցուցնել և ցոյցերնք թէ՛
Հայ. Եկեղեցին պահած է Անարատ Յղու-
թեան սուրբ անմեղութիւնը. և չի վայե-
լէր նոսմացնել այս փայլը որով իրաւունք
ունի պարծելու:
ԹԱԴԵՆՈՍ ՏԻՇՏԻՇԵԱՆ

Կ-ԲԱԹՐԻԳԻՄԱՆԷ ՀԱՎԱՏԻՍԻ

Պայրամըն պիրինձի բնէնչնպիւն կիւ-
նիւ, Կ-Բաթրիգ իւթայ Սապպաղեան էֆ.
հաղըթէթի, ինչպէս թուում Գեաթիլի
խոստումն Գեթի, ինչպէս Թ. Վ. Մա-
լոյեան վէ Բաթրիգիանէ միգ գարու քէ-
եաւ սառաւ. Թովմէի էֆ. Շէհրեան օլուղը
հալտէ, Մալէյի շիւմայունա պիլ ագիլէ,
Սէր գարիլի հաղըթի Շէհրեարի Հանի
Ալի բաշա հաղըթի թարաֆընտան գա-
պուլ օլունուպ, միւշարիլէյ հաղըթի լէրի
վարթաւը խաբէբալ Շահանէէ ըսա-
մը թէպիլեթաթ վէ ուղտտիլէթի արդ ու
թագաթի իթմէլէ, պիլ վարթաւ մաղշա-
րը սէլամ վէ իլթիֆաթ Շէհրեարի օլունու
տըր:
Պատէհու Կ-Բաթրիկի միւշարիլէյ՝ Մա-
պէյի շիւմայուն էրքեանընտան՝ Պաշ-
քեաթիլ Թահսին, Գեաթիլի սանի իդ-
գէթ, Թէշրիֆաթ ումուրիլ նաղըր իւ-
րահիմ, Գարիլի սանի Նուրի բաշալար հա-
ղարաթը, վէ պատէհու նիշանթալը:

Վրէննա 9. — «203 մէթր թէք
նին ի գէրինտէն ճաբօնլարն ի
աթէշի նէթիճէսի օլորագ, Բօրթ
թիւրաւքի Բուս հարպ սէֆինէլէ
նին ախլար օլտուղը գարաւ՝ իւք
լէկրաֆլարն խապէր վէրսիկին
յօգ փնտտէ վէշիսիմուշ տըրի Բ
օրա՝ 4 գըլնա էն պիւլիւք զըրհ
սրինն զպալընտան տօլայը միւթ
սիւֆ օլուպ, ճաբօնիա օլտու մէր
գինտէն Թօքիտա չէքիլէն թէլ
րաֆնամէտէ, պու պապտէ պ

